ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1533 04.05.2015թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՈՒՏՔ № 1976
05 05 2015 թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի ապրիլ ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Ախուրյանի ՁՊՎ արձանագրել էր մի շարք թերություններ և խախտումներ, ինչպես նաև Դիտորդական խմբի աշխատանքները խոչընդոտելու երկու դեպք:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔ № 2817
05 05 2015 թ.

Դիտորդական խմբի աշխատանքների խոչընդոտում՝

1. Այցելություն կատարած Դիտորդական խմբի անդամ Հ. Իսկանդարյանի մուտքը ի սկզբանե արգելվեց, որովհետև հերթապահ մասում պահվող Դիտորդական խմբի անդամների ցուցակի մեջ բացակայում էր նրա անուն ազգանունը: Որոշ ժամանակ անց, անհասկանալի պատճառով թույլատրվեց նրա մուտքը, այնուհետև արդեն ՁՊՎ–ի տարածքից դուրս հրավիրվեց խմբի անդամը, արգելելով նրա <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքը: Որոշ ժամանակ անց, տվյալ բաժնի պետի թույլտվությամբ, տվյալ անդամը կրկին մուտք գործեց ՁՊՎ:

Դիտորդական խմբի անդամները չեն կարծում, որ հերթապահ մասում պահվող Խմբի անդամների ցուցակում, որևէ խմբի անդամի անուն ազգանունմ չլինելը պետք է խոչընդոտ հանդիսանա Խմբի բնականոն աշխատանքների վրա:

2. Դիտոդրական խմբի անդամները համապատասխան ուսումնասիրություններ կատարելու ընթացքում հերթապահ մասի պետից խնդրել և ստացել են այն բոլոր հիմքերը, որոնցով անձիք ՁՊՎ-ում պահում, տեղափոխում, ազատ են արձակվում և այլն: Աշխատանքի վերջում անհասկանալի պատճառներով հերթապահ մասի պետը անակնկալ սկսեց իրեն պահել ոչ

ադեկվատ և ոչ կոռեկտ: Հավաքեց բոլոր փաստաթղթերը, տեղավորեց չհրկիզվող պահարանում և Դիտորդական խմբի անդամներին հայտնեց, որ մեջբերում ենք <<ինչ հիմք որ ցանկացել եք ՀՊՎ-ում պահվող անձանց վերաբերյալ, արդեն իսկ բավարար է, և ոչինչ չունեմ ձեզ տրամադրելու>>:

Ներկայացրածի վերաբերյալ Դիտորդական խումբը, պաշտոնապես հայտարարում է, որ չի ընդունի այն պարզաբանման տարբերակը, որ Դիտորդական խմբի անդամները անձնական գործ են պահանջել և նայել: Հայտում ենք, որ Դիտորդական խմբի անդամները ամբողջությամբ տիրապետում են իրենց լիազորություններին և ուղղորդվում են Խմբի էթիկայի կանոնակարգով:

Թերություններ՝

1. Խցում առկա մեկական բարձի երեսը և սավանը գտնում էին կեղտոտ վիճակում: Պատասխանատու ոստիկանները մեկնաբանեցին, որ կալանավորված անձը ձեռքերը սրբել և տեղափոխվել է ՔԿՀ: Այն դեպքում, երբ ՀՊՎ-ում վերջին կալանավորը պահվել է Դիտորդական խմբի այցելությունից մոտ 10 օր առաջ */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկարներ – 1/*

2. Առկա են խցեր, որտեղ լվացարանները գտնվում են կեղտոտ վիճակում և Խցի ջրի ծորակից անընդմեջ ջուրը հոսում էր: */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկարներ – 2,3,4,5/*

Խախտումներ՝

1. Դիտորդական խմբի ուսումնասիրությունները կրկին անգամ ցույց տվեց, որ տվյալ ՀՊՎ-ում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջը չի կատարվում: Այն է՝ մարմնական վնասվածքներով ՀՊՎ ընդունված անձանց մարմնական վնասվածքները չեն գրանցվում <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության >> գրացամատյանում:

Տվյալ հիմնախնդրի վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից մեկ անգամ մեկնաբանություն տրվել էր, որ <<*կատարվել են քայլեր հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ*>> 09.03.2014թ-ի թիվ 2/2-1-2132 գրությամբ, իսկ երկրորդ անգամ <<*ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ կողմից պայմանավորվածություն է ձեռք բերվել Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության հետ, որպեսզի այսուհետ ՀՊՎ այցելած*

բուժաշխատողը ՀՊՎ ընդունված և վնասվածքներ ունեցող անձանց նկատմամբ կատարի մարմնի արտաքին զննություն և համապատասխան գրառումներ՝ <<ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանում>> 07.11.2014թ-ի 2/2-1-2871 գրությամբ:

Դիտորդական խմբի կարծիքով տվյալ ՀՊՎ-ի վարչակազմի համար ոչ Ձեր կողմից տրված հանձնարարականները և ոչ էլ ՀՀ օրենսդրության պահանջները դերակատարություն չունեն: Վառ ապացույց է հանդիսանում այն փաստը, որ հերթապահ մասի պետը պաշտոնապես հայտարարեց, որ մինչ իր հերթապահ մասի պետ նշանակվելը, տրված հանձնարարականները իրեն չեն վերաբերում, և ինքը պարտավոր չէ դրանք կատարելու: Խնդրում ենք այլ միջոցներ ձեռնարկել խնդիրը լուծելու համար:

2. Բուժօգնության նպատակով, խցից դուրս բերելուց և օգնություն ցույց տալուց, ոչ բոլոր դեպքերում են գրառումներ կատարում <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում:

3. Հայկ Ժենկայի Կյուրեղյանը ձերբակալվել է 26.01.2015թ-ին ժամը 14.15-ին, ՀՊՎ է ընդունվել նույն օրը՝ ժամը 19.35: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է տեղափոխվել արդեն իսկ արգելանքի մեջ գտնվելու առավելագույն 72 ժամը անց՝ 29.01.2015թ-ին ժամը 14.42: */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկարներ – 6,7/*

4. Խաչատուր Վարդանի Ենգոյանը ինքնակամ, որպես կասկածյալ 19.02.2015թ-ին ժամը 11.40-ին ներկայացել է Ախուրյանի բաժին, որից հետո ժամը 13.45-ին ձերբակալվել և ժամը 19.00-ին ընդունվել է ՀՊՎ: Խ. Ենգոյանին ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան խափանման միջոց կիրառելու նպատակով խցից դուրս են բերել և տեղափոխել են արդեն ՀՀ սահմանդրությամբ նախատեսված առավելագույն 72 ժամը լրացած՝ 22.02.2015թ-ին ժամը 12.25-ին: */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկարներ – 8,9,10/*

Այսպիսով, խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ ՀասմիկՍահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1695 << 26 >> 05 2015թ

Ձեր՝ 04.05.2015թ. թիվ 2621/1533 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հ.Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. ապրիլ ամսին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Շիրակի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Գրությունում նշված թերություններին անրադարձ չի կատարվում ՁՊՎ-ի գործունեությունը դադարեցնելու պատճառով:

ՁՊՎ այցելություն կատարած դիտորդների խմբի անդամի մուտքը խոչընդոտելու, <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում դուրս բերման ոչ բոլոր դեպքերով գրառումներ կատարելու, <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում ձերբակալվածներին բուժօգնություն ցուցաբերելու երկու դեպքով համապատասխան գրառումներ չկատարելու, ձերբակալված Հ.Կյուրեղյանին ՁՊՎ-ում սահմանված ժամանակից ավել պահելու համար, ոստիկանության Ախուրյանի բաժնի հերթապահ մասի պետը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ հայտարարվել է <<Խիստ նկատողություն>>:

Ինչ վերաբերվում է հերթապահ մասի պետի կողմից ոչ ադեկվատ և ոչ կոռեկտ վարքագիծ դրսևորելուն, ապա պարզվել է, որ խմբի անդամների խնդրանքով նա վերջիններիս տրամադրել է ՁՊՎ-ում պահվող անձանց ընդունման, պահման և տեղափոխման հիմքերը, որոնք կարված են եղել անձնական գործերում, սակայն տեսնելով, որ խմբի անդամները հիմքերը նայելու պատրվակով ուսումնասիրում են ամբողջ անձնական գործը, վերցրել է բոլոր անձնական գործերը և դրել երկաթյա պահարանի մեջ՝ մեկնաբանելով, որ անձնական գործերին խմբի անդամները կարող են ծանոթանալ միայն անձի համաձայնության դեպքում: Հերթապահ մասի պետի այս գործողությունը խմբի անդամների կողմից դիտվել է որպես ոչ ադեկվատ և ոչ կոռեկտ վարքագիծ, սակայն վերջինս այդ կերպ է վարվել, քանի որ գիտակցել է, որ անձնական գործերը

խմբի անդամներին տրամադրելով խախտել է ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանի 12-րդ կետի պահանջը: Ի դեպ, անկախ այն հանգամանքից դիտորդների խումբը ընդունում է, թե ոչ, նույն խախտումը թույլ է տրվել նաև խմբի կողմից՝ անձնական գործերը և գրագրությունը ուսումնասիրելով:

Հարկ է նշել նաև, որ Խ.Ենգոյանը 19.02.2015թ. ժամը 11.40-ին մեղայականով ինքնակամ ներկայացել է ոստիկանության Ախուրյանի բաժին, ձերբակալվել է նույն օրը ժամը 13.45-ին և տեղափոխվել ՁՊՎ: Խ.Ենգոյանը 22.02.2015թ. ժամը 12.25-ին խափանման միջոցը քննության առնելու նպատակով տեղափոխվել է դատարան, որտեղ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը՝ միաժամանակ թույլատրվել է գրավի կիրառումը: Տվյալ դեպքում Խ.Ենգոյանի իրավունքերը չեն խախտվել, քանի որ նա ոստիկանության բաժին է ներկայացել ինքնակամ և մինչև ձերբակալման արձանագրություն կազմելը նրա ազատ տեղաշարժվելու իրավունքը չի սահմանափակվել:

ՀՀ ոստիկանության շտաբ